ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ)

ԱՇՏԱՐԱԿ 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

I. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ,ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 4

II. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 6

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 7

IV. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10

V. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 12

5.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 12

5.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ 14

5.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 16

5.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 18

VI. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 20

6.1. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 20

6.2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ 22

6.3. ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ 22

6.4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ 23

VII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 23

VIII. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 24

8.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 24

8.2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ 25

8.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 26

8.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 27

IX. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 28

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔ 28

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 28

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 28

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏԶՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱԱ	Համախառն ավելացված արժեք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷԵԲՊՆ	էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկություններ զարգացման ազգային կենտրոն
ՄԶՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԳԾ	Տարեկան գործունեության ծրագիր
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանը յուրաքանչյուր տարվա համար մշակում է տարեկան գործունեության ծրագիր և իրականացման ամբողջ ընթացքում ապահովում է համայնքների, հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների ակտիվ մասնակցությունը:

Տարեկան գործունեության ծրագիրի կազմման նպատակն է ապահովել 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության տվյալ տարվա համար նախատեսված միջոցառումների իրականացումը, ամփոփել պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները: Այն կազմված է 2018 թվականի համար՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հաստատված պետական բյուջեի և 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային և այլ կազմակերպությունների կողմից ՀՀ Արագածոտնի մարզում 2018 թվականին նախատեսվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ մարզպետարանին տրամադրված տեղեկատվությունը:

2018թ. գործունեության ծրագիրն ընդհանուր առմամբ ներառում է մարզի զարգացման ռազմավարական նպատակները, այն է.

1. ***մարզի տնտեսական աճի ապահովում,***
2. ***համայնքների համաչափ զարգացում,***
3. ***տարածքային և տեղական կառավարման համակարգերի կատարելագործում:***

ՀՀ Արագածոտնի մարզի ռազմավարական նպատակները, 2017-2025 զարգացման ռազմավարությունը հիմնված է մարզի իրավիճակի գնահատման, ուժեղ կողմերի և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա:

Արագածոտնի մարզի զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններն ու նպատակներ են՝

1. ***Ժամանակակից արդյունաբերության զարգացումը,***
2. ***Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, գյուղատնտեսության արդիականացումը,***
3. ***Զբոսաշրջության խթանումը, մարզի ճանաչվողականության բարձրացումը և ենթակառուցվածքների զարգացումը:***

Ծրագրի իրագործման պարագայում ակնկալվում է ապահովել հետևյալ արդյունքները.

1) մարզի տնտեսության զարգացման աճ, այդ թվում՝
   - ***տնտեսվարող սուբյեկտների, այդ թվում՝ ՓՄՁ գործունեության համար բարենպաստ պայմանների և հնարավորությունների ստեղծում,***
   - ***բնակչության զբաղվածության աճ և գործազրկության նվազում,***
   - ***բնակչության եկամուտների աճ և աղքատության կրճատում,***
   - ***գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման ծավալների աճ,***
   - ***մարզի շրջակա միջավայրի պահպանության բարելավում,***

- ***զբոսաշրջության զարգացման խթանում և ոլորտում գրավչության ապահովում,***
- ***սոցիալական ոլորտում (կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն, սոցիալական ապահովություն) բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում և մատչելիության մակարդակի բարձրացում,***
- ***մարզային և համայնքային ենթակառուցվածքների բարելավում:***

2) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում,

3) մարզային և համայնքային զարգացման գործընթացներում քաղաքացիական հասարակության իրազեկվածության ապահովում և մասնակցության ակտիվացում:

Մարզի 2018 գործունեության ծրագրի համար կարևորվում է իրականացվելիք միջոցառումների մշտադիտարկումը: Մշտադիտարկման համակարգը կվերահսկի ծրագրի կատարումը և կամփոփի 2018 թվականի գործունեության արդյունքները:

2018 գործունեության ծրագրի մշտադիտարկման համակարգը ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

Ծրագիրը մշտադիտարկման կենթարկվի մարզի վարչակազմի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

Մշտադիտարկման տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների արդյունքները: Այն կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

1. տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները, կատարված ծախսերը և արդյունքները,
2. հաջորդ տարվա հիմնախնդիրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

Մշտադիտարկման տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի ծրագրի արդյունքներն ամփոփող խորհրդակցություն, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ի. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ,ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2018թ. մարզում արդյունաբերության ոլորտի և ՓՄՁ հատվածի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներն են.

1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն,

2) նոր աշխատատեղերի ստեղծում՝ ի հաշիվ նոր արտադրական ճյուղերի ստեղծման և գործող արտադրական հզորությունների ընդլայնման,

3) ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթացի իրականացում,

4) մարզի արդյունաբերական արտադրանքի արտահանման խթանման նպատակով արտերկրի առանձին մարզերի կամ շրջանների հետ կապերի հաստատման և խորացման գործընթացի շարունակում, համատեղ ձեռնարկությունների հիմնման ուղղությամբ գործնական քայլերի իրականացում,

5) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային արդյունավետ ծրագրերի մշակում,

6) ՓՄՁ աջակցության ծրագրերում ՓՄՁ սուբյեկտների ընդգրկվածության մակարդակի բարձրացում:

7) մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար տարածաշրջանային ներդրումային առաջարկների փաթեթների կազմում և պարբերաբար իրազեկման միջոցառումների իրականացում ներքին և արտաքին ներդրողների համար:

Մարզի արդյունաբերության զարգացման հեռանկարը կապված է ներքոհիշյալ ճյուղերի զարգացման հետ.

1) գյուղմթերքների վերամշակում,
2) թեթև արդյունաբերություն,
3) թանկարժեք քարերի մշակում, ադամանդագործություն,
4) ձկնաբուծություն,
5) սննդի արդյունաբերություն,
6) վերականգնվող էներգիայի արտադրություն,
7) հանքահումքային արտադրություն,
8) զբոսաշրջություն:

ՀՀ Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսվում է ընդլայնել գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները՝ նախապատվություն տալով մարզի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի սուբյեկտներին, բարելավել գործարար միջավայրը, ստեղծել ձեռնարկատիրության զարգացման համար հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտ:

Աջակցություն կցուցաբերվի արտահանման ներուժ և ներդրումների կարիք ունեցող ՓՄՁ սուբյեկտներին, ՓՄՁ աջակցության գործող կառույցներին, ինչը կարող է կնպաստի նոր ստեղծվող կազմակերպությունների աճին, աշխատատեղերի ստեղծմանը և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով մարզում գործազրկության մակարդակի կրճատմանը, կապահովվի թողարկվող արտադրանքի ծավալների աճ, ներդրումային ռիսկի նվազեցում և արտերկրների հետ տնտեսական համագործակցության կազմակերպում:

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանը մեծ ներուժ ունի ալմաստի վերամշակման ոլորտում: Նախատեսվում է «Դայմոտեկ» ՓԲԸ Թալինի մասնաճյուղի ադամանդագործության ռեսուրսների հիման վրա, ընկերությունում աշխատել է շուրջ 500 փորձառու ադամանդամշակման մասնագետ, ապահովել արտադրությունը: Գործարանը 2-3 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ ալմաստի հումքի ապահովման դեպքում կարող է տարեկան մշակել շուրջ 50 հազար կարատ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծել 150-200 նոր աշխատատեղ, շուրջ 150-200 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով:

Ապարան քաղաքում նախատեսվում է իրականացնել կարի արտադրամասի և պանրագործարանի հիմնման աշխատանքները: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստեղծել 150-200 նոր աշխատատեղ, շուրջ 150-200 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով: Ընդհանուր ներդրումային ծրագիրը գնահատվում է 600.0 մլն դրամ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

Մարզում 2018 թվականին գործունեության ծրագրով նախատեսվում է մեկ շնչի հաշվով տարածքային ՀՆԱ-ն 2017 թվականի համեմատ ավելացնել 1-3%-ով:

Մարզում 2018 թվականին արդյունաբերության և ՓՄՁ ոլորտում, սեփական արտադրության, ծառայությունների և առևտրի ծավալների ընդլայնման նախատեսված ներդրումների ընդհանուր ծավալը գնահատվել է 11,6 մլրդ. դրամ: Մասնավոր միջոցները կուղղվեն մշակող արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության, սպանդանոցային

և սառնարանային ձեռնարկությունների հիմնմանը: Արդյունքում կստեղծվեն՝ 4 նոր ձեռնարկություններ և արտադրամասեր որից՝ 1 սառնարանային տնտեսություն 400 տոննա տարողությամբ, նշված օբյեկտի գործարկման արդյունքում կստեղծվի 10 նոր աշխատատեղ, 1 սպանդանոցային տնտեսություններ շուրջ 5000-10500 տոննա/տարի կենդանի քաշով 1 հերթափոխում/ 8 ժամ/, նշված օբյեկտի գործարկման արդյունքում կստեղծվի ավելի քան 20 նոր աշխատատեղ:

2018 թվականին նշված ծրագրերի իրականացման արդյունքում կձևավորվեն առնվազն 430 նոր աշխատատեղ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

Մարզի տնտեսական ցուցանիշներ

Մարզի վարչական տարածքում պլանավորված 30467,7 մլն դրամ ներդրումներից առաջին կիսամյակում իրականացվել են 18328,2 մլն դրամը կամ 60,2 տոկոսը:

Պլանավորված 15550,0 մլն դրամ մասնավոր ներդրումներից իրականացվել են 9 990,0 մլն դրամը կամ 21.1 64,2 տոկոսը:

Տարվա ընթացքում ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվը (առանց սեզոնային աշխատատեղերի) կազմում է 347 հիմնական աշխատատեղեր:

Համայնքների ֆինանսական ցուցանիշներ

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների 2018թ. բյուջեներով նախատեսվել են 3 956,1 մլն դրամ եկամուտներ, այդ թվում սեփական եկամուտներ՝ 1 437,7 մլն դրամ: Առաջին կիսամյակում նախատեսված 503,8 մլն դրամի դիմաց սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը կազմել է 476,1 մլն դրամ, կամ նախատեսվածի 94,5%-ը: Սեփական եկամուտները բնակչության մեկ շնչի հաշվարկով 2018 թվականին կկազմի 11.1 հազ. դրամ, առաջին կիսամյակում այն կազմել է 3.7 հազ. դրամ: Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 36.4%, առաջին կիսամյակում այն կազմել է 27,7%:

II. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզում զբոսաշրջության զարգացումն ունի մեծ հեռանկար, քանի որ մարզում առկա է զբոսաշրջության հիմնական ճյուղերի՝ համակարգված և փոխլրացնող զարգացման համար անհրաժեշտ և մեծածավալ ներուժ: Մարզը կարող է հետաքրքիր լինել ինչպես ներգնա, այնպես էլ՝ ներքին զբոսաշրջության զարգացման համար:

Զբոսաշրջության զարգացումը հանդիսանում է ՀՀ Արագածոտնի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության գերակա խնդիրներից մեկը, ուստի զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացման համատեքստում ավելի արդիական է դառնում մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը:

Բնական տարածքների տուրիստական պոտենցիալի զարգացման համար լայն հնարավորություն է տալիս մարզի տարածքով անցնող Քասաղ գետի առկայությունը՝ իր շրջակա միջավայրով, կիրճերով, բնության գեղատեսիլ վայրերով:

Զարգացման մեծ հնարավորություն ունի ճանաչողական և ընտանեկան տուրիզմը, մարզում առկա են 1893 պատմամշակութային հուշարձաններ, որոնցից 1329-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:

Խոշոր հյուրանոցային օբյեկտներից են՝ Աշտարակ քաղաքում «Աշտարակ» հյուրանոցը, Բյուրական համայնքում «Ամբերդ» հյուրանոցը և «Հյուսիսային Աստղ» հյուրանոց-սպորտային-առողջարանական համալիրը, Արագած համայնքում՝ «Արագած» հյուրանոցը, որտեղ ձմեռային տուրիզմի, լեռնագնացության, հանգստի, առողջարարական սպորտի, ալպինիզմի կազմակերպման մեծ հնարավորություններ կան:

Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կհասնի ցանկալի արդյունքի:

Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

- քաղաքային տուրիզմ,
- պատմա-ճարտարապետական տուրիզմ,
- ձմեռային տուրիզմ
- արկածային տուրիզմ, գյուղական տուրիզմ և էկոտուրիզմ:

Նշված զբոսաշրջային ուղղությունների զարգացման արդյունքում մարզ այցելող զբոսաշրջիկների թիվը կավելանա շուրջ 20-30%:

Զբոսաշրջության զարգացման համար ՀՀ Արագածոտնի մարզն ունի հետևյալ առավելությունները.

1) Հարմար աշխարհագրական դիրք և տրանզիտային հնարավորություններ,
2) Հարմար տրանսպորտային ենթակառուցվածքներ,
3) Հարուստ պատմա – մշակութային ժառանգություն,
4) Էկոլոգիապես մաքուր և գեղեցիկ բնություն,
5) Շուրջտարյա զբոսաշրջության կազմակերպման մեծ պոտենցիալ,
6) Յուրահատուկ խոհանոց:

Զբոսաշրջության ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների, ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների, ոչ բավարար մակարդակ:

2018 թվականին մասնավոր հատվածի, ՓՄՁ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսված է զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղությամբ իրականացնել շուրջ 1.1 մլրդ. դրամի ներդրումներ: Այդ միջոցների հաշվին նախատեսվում է հիմնել 1 և ընդլայնել 1 հանգստի և ժամանցի հասարակական սպասարկման օբյեկտներ, կառուցել և ընդլայնել 1 հյուրանոցային և 1 ռեստորանային համալիրներ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կձևավորվեն առնվազն 100 աշխատատեղ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են բուսաբուծությունը և անասնապահությունը:

Մարզում առկա է 54100.3 հա վարելահող, որից տարեկան օգտագործվում է մոտ 40-50%-ը: Վարելահողերի չօգտագործման հիմնական պատճառներն են՝ բնակավայրերից հեռու գտնվելը, քարքարոտությունը, ինչպես նաև ոռոգելիության դժվարությունները: Մարզում 28000 հա ոռոգելի վարելահողերից 2017թ. ոռոգվել է 14000 հա: Նախատեսվում է 2018թ. ոռոգելի հողատարածքներն ավելացնել շուրջ 400 հա-ով՝ ի հաշիվ ոռոգման ջրագծերի վերանորոգման և ինտենսիվ այգիների հիմնման:

Ոլորտի հետագա զարգացումն ապահովելու նպատակով ներկայացվող միջոցառումներն են.

- ***Գյուղտեխնիկայով ապահովում.*** մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացումը մեծապես պայմանավորված է գյուղտեխնիկայի ներդրման ու կիրառման ասպարեզում նոր ծրագրերի և նոր մոտեցումների կիրառմամբ: Անհրաժեշտություն է ներկայիս պահանջներին համապատասխան ժամանակակից մեքենատրակտորային կայանների հիմնումը: Կայանների գործունեության արդյունքում կնվազի մատուցվող ծառայությունների գները:

2018թ. մարզում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության պետական աջակցության ծրագրերից կօգտվի ավելի քան 15 շահառու:

- ***Ինտենսիվ այգիների հիմնում, ֆերմերների վերապատրաստում և օրգանիկ գյուղատնտեսության խրախուսում.*** նոր ինտենսիվ այգիների հիմնում ժամանակակից տեխնոլոգիաներով /հակակարկտային ցանց, ոռոգման կաթիլային եղանակ և այլն, տնկիների խնամքի ու մշակության նոր մեթոդների ներդնում/, ինչպես նաև տնկանյութի արտադրությամբ զբաղվող կենտրոնի հիմնում, որի համար բազա կարող է ծառայել Կարբի համայնքում գտնվող տնկարանային տնտեսությունը:

2018թ. նախատեսվում է մարզում հիմնել ևս 120 հա ինտենսիվ այգի (Կարբի - 15 հա, Սասունիկ - 55 հա, Պարտիզակ 50 հա):

Ինտենսիվ այգիների ավելացմանը զուգընթաց մարզում ավելանում է նաև սառնարանային տնտեսությունների թիվը: 2017թ. մարզում գործում են 18 սառնարանային տնտեսություններ՝ մոտ 9000 տ պահպանման կարողությամբ: 2018թ. նախատեսվում է կառուցել ևս 1 տնտեսություն 400 տոննա կարողությամբ և վերակառուցել 600 տոննա կարողությամբ սառնարանը՝ հասցնելով 1200 տոննայի: Սառնարանային տնտեսությունների պահպանման կարողությունը կհասնի մոտ 10000 տոննայի:

- ***Արոտների արդյունավետ օգտագործում.*** ներկայումս օգտագործվում է առկա արոտների 25 - 30 տոկոսը: Նշված ցուցանիշն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հեռագնա արոտներն էլեկտրասնուցմամբ ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում կկրճատվի միավոր արտադրանքի ինքնարժեքը և կավելանան անասնապահական մթերքների ծավալները:

- ***Հողերի արդյունավետ, ամբողջական և նպատակային օգտագործում.*** հողերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է սկսել չօգտագործվող հողերի հետ վերադարձի գործընթացը՝ համաձայն գործող կարգի (ըստ անհրաժեշտության կատարել նաև օրենսդրական փոփոխություններ) և նպատակային օգտագործման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարների վրա:

- ***Ոռոգման համակարգերի կառուցում.*** մարզի համայնքների ոռոգման համակարգերում հոսակորուստների նվազեցման և առանձին համայնքներին ոռոգման ջրով ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել նոր ջրագծեր և վերանորոգել հին ցանցերը:

Ելնելով ՀՀ կառավարության կողմից ներկայումս իրականացվող գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խրախուսող քաղաքականությունից (գազի գնի իջեցում, հարկային արտոնություններ և այլն), միաժամանակ մարզում առկա հողային ռեսուրսներից և նպաստավոր բնակլիմայական պայմաններից՝ նախատեսվում է մարզում ավելացնել փակ գրունտի բանջարեղենի և ծաղկի արտադրությունը: Մարզում ջերմոցային տնտեսության վարման ուղղությամբ մեծ փորձ կա: Տարիներ շարունակ ջերմոցային տնտեսությունը տվել է ձմեռվա ժամանակաշրջանի գյուղատնտեսական արտադրանքի մինչև 40%-ը: Ոսկեվազ համայնքում գործում են 28 հա ելակի չտաքացվող սեզոնային ջերմոցներ: Մարզի Ոսկեվազ, Ագարակ, Աշտարակ, Օշական և Կարբի համայնքներում գործում են 7.52 հա ընդհանուր մակերեսով ժամանակակից ջերմոցային տնտեսություններ: Ջերմոցներում արտադրվել են բանջարեղեն և մերձարևադարձային մշակաբույսեր: Մարզի գործարարների փորձերը ցույց են տվել, որ ոլորտը կարելի է ընդարձակել: Հնարավորություն կա ոչ միայն ձեռնմուխ լինել ավանդական

մշակաբույսերի արդյունաբերական արտադրությանը, այլև մշակել և արտադրել ոչ ավանդական մշակաբույսեր: Ներկայումս մարզում գործում են 10-ից ավելի ջերմոցային տնտեսություններ: Բանջարեղենի և մյուս մշակաբույսերի արտադրությունը կարելի է եռապատկել:

2018 թվականին Աշտարակ և Ոսկեվազ համայնքներում կշահագործվի ևս 3 հա ժամանակակից ջերմատներ:

Մարզում զարգացվում է հացահատիկային մշակաբույսերի սերմարտադրությունը՝ ստեղծելով հացահատիկի սերմարտադրողների միություն: Սա ենթադրում է մի շարք երկարաժամկետ հետևողական միջոցառումների իրականացում, որոնք ուղղված կլինեն մարզում հացահատիկի ամբողջ տնտեսության վերականգնմանը:

Մարզում կարևորվում են կարտոֆիլի արտադրությանն ու սորտաթարմացմանն ուղղված միջոցառումները: 2018թ. ֆերմերային տնտեսությունների սեփական նախաձեռնությամբ մարզ կներկրվի ավելի քան 90 տոննա էլիտար տնկանյութ: Նախատեսվում է նաև կարտոֆիլի տնկանյութի աճեցում անջրդի պայմաններում:

Մարզում առկա հակակարկտային կայանները (77 հատ) բավարար չեն ցանքատարածությունները կարկտահարությունից պաշտպանելու համար: Մարզում գործում են 77 հատ հակակարկտային կայաններ,որոնք ծածկում են ընդամենը 6200 հա տարածք: 2018թ. գարնանը կգործեն նաև 2 հրթիռային հակակարկտային կայաններ /յուրաքանչյուրի պաշտպանական գոտին 10 կմ շառավղով է/, 2018թ. մարզում կտեղադրվեն ևս 8 հրթիռային հակակարկտային կայաններ:

Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկական պահանջների կատարման, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման միջոցով անհրաժեշտ է բարձրացնել ինչպես մշակաբույսերի բերքատվությունը, այնպես էլ կենդանիների մթերատվությունը՝ արդյունքում բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մյուս կարևոր նախադրյալը անասնապահության արտադրողականության բարձրացումն է տոհմային տնտեսությունների հիմնման և արհեստական սերմնավորման միջոցառումներ իրականացնելու շնորհիվ:

Մարզում իրականացվում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվին, Արագածավան և Աշտարակ համայնքներում գործում են 2 խոշոր եղջերավոր կենդանիների տոհմային տնտեսություններ, որոնք մասնագիտացված են սիմենթալ, շվից և հոլշտեյն ցեղատեսակների բուծմամբ /150 գլուխ/ և Ապարան համայնքում 1 խոզաբուծական տոհմային տնտեսություն: Տնտեսությունները բուծում են նաև 300 գլուխ <<արագած>> ցեղատեսակի ոչխար: 2017թ. արհեստական սերմնավորվել է 400 գլուխ խ.ե.կ., 2018թ. նախատեսվում է սերմնավորել 600 գլուխ խ.ե.կ.:

2018թ. պետական ֆինանսավորմամբ կիրականացվեն գյուղատնտեսական կենդանիների հակաանասնահամաճարակային միջոցառումներ:

Մարզի Վարդենուտ համայնքում գործում է ժամանակակից սպանդանոց,որտեղ հնարավոր է 1 հերթափոխում /8 ժամ/ մորթել 150 գլուխ մ.ե.կ., 100 գլուխ խոզ և 50 գլուխ խ.ե.կ. կամ 10500 տոննա/տարի կենդանի քաշով: Անասնաբուծության զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակներում անհրաժեշտություն կա կառուցելու ևս 2 սպանդանոց, 2018թ. նախատեսվում է կառուցել 1 սպանդանոց:

2018թ. գյուղատնտեսության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի 5,3 մլրդ. դրամ, որը կուղղվի ջերմոցային և տոհմային տնտեսությունների, ինտենսիվ այգիների և գյուղատնտեսական կոոպերատիվների հիմնմանը, ինչպես նաև մարզում գործող ՋՕԸ-երի կողմից 130 մլն. ՀՀ դրամ կհատկացվի համայնքների ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման համար: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կձևավորվեն

առնվազն 70 աշխատատեղ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

Գյուղատնտեսության ցուցանիշներ

Մարզում 2018թ. պլանավորված 5 325,4 մլն դրամ գյուղատնտեսության ոլորտում ներդրումներից առաջին կիսամյակում կատարվել են 2 667,3 մլն դրամ ներդրումներ կամ նախատեսվածի 50,1 տոկոսը: Պլանավորված 70 աշխատատեղից ստեղծվել է 55 աշխատատեղ կամ 78,6 տոկոսը: Տարվա ընթացքում ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվը (առանց սեզոնային աշխատատեղերի) կազմում է 15, (65 սեզոնային:

Կարբի համայնքում 15 հա պատրաստ է տնկման համար,կառուցվում է խորքային հոր/ 140 մ / և ջրավազան կաթիլային ոռոգման համար/ 7.000 խոր.մետր/, Սասունիկ համայնքում 23 հա ցանկապատված է , ավարտվել են հողային աշխատանքները:Տնկիները տեղափոխվում են Հայաստան,տեղ հասնելուն պես տնկման աշխատանքները կիրականացվեն:

ք.Թալինում կառուցվում է սպանդանոց / 30 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով/,կատարվել է 25 մլն դրամի ներդրում, աշխատանքները կավարտվեն մայիսի վերջին:

Սառնարանային տնտեսությունների մասով պլանավորված աշխատանքները կսկսվեն ապրիլ ամսին,կավարտվեն նոյեմբերին: Արդեն ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավերումները:

IV. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի առկա բնապահպանական խնդիրները ընդգրկում են հիմնականում ջրօգտագործման, ընդերքօգտագործման, անտառտնտեսվարման ոլորտները: Բնության և շրջակա միջավայրի պահպանության բարելավման նպատակով մարզում նախատեսվում է իրականացնել ներքոնշյալ միջոցառումները.

1) կենցաղային և շինարարական աղբի հեռացման, աղբավայրերի կանոնակարգված շահագործման խնդիրների լուծում,
2) ջրային ռեսուրսների առավել արդյունավետ և նպատակաուղղված կառավարում՝ կեղտաջրերի մաքրման ու մշակման աշխատանքների կազմակերպում, համայնքների և տնտեսվարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվությունների ձեռքբերման աշխատանքների իրականացում,
3) անտառային ռեսուրսների, հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարում, պահպանություն, վերարտադրություն և արդյունավետ օգտագործում,
4) հողերի պահպանության ու ապօրինի հողօգտագործման կասեցման ապահովում և հողի բերրի շերտի օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում
5) բնության հուշարձանների պահպանության նկատմամբ հսկողության իրականացում,
6) բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնում. այդ առումով կարևորվում է մարզում <<Օրհուս>> կենտրոնի և ՀԿ-ների հետ սերտ համագործակցությունը,
7) մարզի առողջապահական և հանգստի գոտիներում գետերի և վտակների մաքրության ապահովում. նախատեսվում է իրականացնել հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման աշխատանքներ՝ կառուցելով ժամանակակից լոկալ մաքրման կայաններ, ինչպես նաև վթարված կոյուղատարների՝ գլխավոր կոլեկտորներին միացման աշխատանքներ,
8) ընդերքի աղտոտումը կանխարգելելու նպատակով նավթի, գազի, բենզինի և այլ նյութերի պահեստավորման, վտանգավոր նյութերի ու թափոնների նկատմամբ վերահսկողության իրականացում.

9) զբոսաշրջության և էկոտուրիզմի զարգացում, որը կնպաստի մարզի էկոհամակարգերի պահպանությանը,
10) բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործում համայնքների մասնակցության ակտիվացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում,
11) բուսական և կենդանական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, որսի կենդանիների և որսահանդակների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության, ինչպես նաև որսագողության, ապօրինի ձկնորսության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացման աջակցություն
12) մարզում կենտրոնացված աղբավայրերի բարեկարգում :

2018 թվականին ընթացքում նախատեսվող ծրագրեր.

2018 թվականին մարզում պետական միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել մեծածավալ աշխատանքներ շրջակա միջավայրի պաշտպանության և կլիմայի փոփոխությանը արձանգանքելու ուղղությամբ:

Բացի այդ նախատեսվում է մարզում միջազգային կազմակերպություններ և դոնոր կազմակերպությունների միջոցով իրականացնել համայնքային անտառների հիմնման, էրոզիայի կանխարգելման և էրոզացված տարածքների բարելավման աշխատանքներ անտառատնկման և բիոինժեներական կառույցների ստեղծման միջոցով:

Աղբահանություն

Մարզում գույքագրված աղբավայրերի թիվը 136 է, գործող հիմնական աղբավայրերի թիվը՝ 11, փակված աղբավայրերի թիվը՝ 124, փակման ենթակա աղբավայրերի թիվը ՝ 1:

Համայնքներում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված աղբահանության պայմանագրերի թիվը 2017 թվականին կազմել է 634, իսկ 2018 թվականին կանխատեսվում է կնքված պայմանագրերի թիվը հասցնել 1400-ի:

2017թ. աղբահանության վճարներից գանձումը կազմել է 47.4 մլն. դրամ, իսկ ծախսը՝ 154.0 մլն. դրամ:

2018թ. աղբահանության վճարներից մուտքերը նախատեսվում են 130.0 մլն. դրամ, իսկ ծախսը՝ 146.0 մլն. դրամ: Աղբահանության վճարները կազմել են աղբահանությանն ուղղված ծախսի 90%-ը: Նշված միջոցները նախատեսվում է հավաքագրել տեղական վճարների տեսքով և ապահովել ինքնաֆինանսավորում, ինչը համայնքների սեփական բյուջեների վրա լրացուցիչ բեռ չի առաջացնի:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ոլորտում կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչներ

#	Անվանումը	Չափման միավորը	2017 թ. փաստացի	2018 թ. պլանավորված
Համայնքային ծառայություններ աղբահանություն և սանիտարական մաքրում				
1	Փակված (կամ փակվելու ենթակա) աղբավայրերի թիվը	հատ	124	1
2	Շահագործվող աղբավայրերի թիվը	հատ	12	11
3	Աղբահանության սխեմայի առկայությունը	այո/ոչ	այո	այո
4	Աղբահանություն իրականացնող բնակավայրերի քանակ	հատ	117	117

5	Ֆիզիկական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն դրամ	33,1	105,1
6	Իրավաբանական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն դրամ	14,3	24,9

2018թ. պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 15.3 մլն. ՀՀ դրամ 1 աղբավայրերի փակման և բարեկարգման աշխատանքների իրականացման համար:

Միջազգային կազմակերպություններ և դոնոր կազմակերպությունների միջոցով նախատեսվում է իրականացնել 15,0 մլն. դրամ մարզում բնապահպանական աշխատանքներ:

Համայնքային բյուջեից նախատեսվել է հատկացնել 15 000,0 հազ. դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ 2018թ. բնապահպանության ոլորտի ֆինանսավորումը կկազմի 45 300,0 հազ. դրամ:

Համայնքային ծառայությունների և աղբահանության ցուցանիշներ

2018թ. ֆիզիկական անձանցից հավաքագրման ենթակա 105,1 մլն դրամ աղբահանության վճարից առաջին կիսամյակում հավաքագրվել է 19,7 մլն դրամ կամ 18,7 տոկոսը, իրավաբանական անձանցից՝ պլանավորված 24.9 մլն դրամից 8.3 մլն դրամը կամ 33,3 տոկոսը:

Աղբահանության ծառայություններ են մատուցվում մարզի 117 բնակավայրերում, շահագործվող աղբավայրերի թիվը կազմել է 11 հատ, փակված աղբավայրերի թիվը կազմել է 1 հատ:

V. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2018թ. ևս ուշադրություն է դարձվել կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին: Իրականացնել հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ:

2018թ. ՏԳԾ-ով առաջարկվում է շարունակել դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման ծրագրերը:

ՀՀ Արագածոտնի մարզում գործում են **122** հանրակրթական ուսումնական հաստատություն (**80**-ը՝ միջնակարգ, **38**-ը՝ հիմնական, **1** հատուկ, **3** ավագ դպրոց, որտեղ սովորում են **17036** աշակերտ: Մարզում գործում են **5** մարզադպրոց, **2** արհեստագործական պետական ուսումնարան և **1** տարածաշրջանային պետական քոլեջ, **5** երաժշտական (Աշտարակ, Արագածավան, Ուջան,

Թալին, Օշական), **4** արվեստի (Կոշ, Ապարան, Ոսկեվազ, Արագած), **2** գեղարվեստի (Աշտարակ, Թալին) և **1** պարարվեստի (Աշտարակ) դպրոցներ:

Նախատեսվում է Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կրճատել **71.5** ուսումնաօժանդակ հաստիք: Արդյունքում՝ տնտեսումը կազմելու է **62.4** մլն դրամ:

2018թ. սեպտեմբերին մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում նախատեսվում է ընդգրկել **17167** աշակերտ, 2017թ. **16459** աշակերտի փոխարեն: 2017-2018 ուս. տարվա շրջանավարտների թիվը կկազմի **445** աշակերտ, 2018թ. 1-ին դասարան կհաճախեն **1762** աշակերտ:

2017-2018 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում ձևավորված **1 243** դասարանում սովորում են **16 459** աշակերտ, միջին խտությունը՝ **13.24**:

Ձևավորվել է **122** առաջին դասարան **1 822** աշակերտով, միջին խտությունը **14.93**:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են **2266** ուսուցիչ: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է **17.66** դասաժամ:

Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը նախորդ ուստարվա համեմատ բարձրացվել է և կազմել է **1:7.26**-ի:

Մարզային ենթակայության ուսումնական **118** դպրոցից լոկալ ջեռուցմամբ ապահովված են **59**-ը, **26**-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով, իսկ **33**-ը՝ վառարաններով:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգվել են **6**-ը, մասնակի վերանորոգվել են **43**-ը, **37**-ը վերանորոգման խիստ կարիք ունեն:

Դպրոցական գույքի, ժամանակակից համակարգչային տեխնիկայի, այլ ուսումնաօժանդակ պարագաների ձեռքբերման, արհեստանոցների վերազինման, գրադարանային ֆոնդի համալրման ուղղություններով կարիքների գնահատումը 2018 թվականին նախատեսվում է հնարավորինս համագործակցել դոնոր կազմակերպությունների, դրամաշնորհային ծրագրերի, առանձին բարերարների հետ:

Կրթական հաստատությունների խնդիրները և դրանց լուծմանն ուղված առաջարկություններ

Կրթական հաստատությունների խնդիրները

- Սպորտդահլիճների կառուցում և վերանորոգում
- Հանդիսությունների դահլիճների կառուցում և վերանորոգում,
- Երաժշտական, գրական թատերական, սպորտային և այլ խմբակների կազմակերպում,
- Հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի դպրոցները անհրաժեշտ կադրերով ապահովում,
- Հեղուկ վառելիքվ ջեռուցվող դպրոցներում լոկալ ջեռուցման համակարգի ապահովում

Թերբեռնված համայնքային դպրոցների վերակազմակերպում

- Թերբեռնված համայնքներում, որտեղ չկան մշակութային և սպորտային գործող կառույցներ դպրոցներում ստեղծել կրթական, մշակութային և սպորտային կենտրոններ, որից կօգտվեն նաև համայնքի բնակիչները:

Դպրոցները կադրերով ապահովում.

Սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների դպրոցները մանկավարժական կադրերով համալրման նպատակով տվյալ համայնքներում բարձրագույն, սակայն ոչ մասնագիտական կրթություն ունեցողների վերապատրաստում:

2018թ. նախատեսվում է շարունակել մարզի դպրոցների վերանորոգմանը, ժամանակակից լաբորատորիաներով և լաբորատոր սարքավորումներով, ինչպես նաև նորագույն տեղեկատվական-տեխնոլոգիական միջոցներով ապահովմանը և մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված աշխատանքները:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից կրթության ոլորտում կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչներ

#	Անվանումը	Չափման միավորը	2017 թ. փաստացի	2018 թ. պլանավորված
Կրթություն				
1	Դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը	թիվը	7,26	8,3
2	Միջազգային/հանրապետական օլիմպիադաների մրցանակակիրներ	մարդ	13	15
3	Ուսումը միջազգային կամ ՀՀ պետական ԲՈՒՀ-երում շարունակողներ	մարդ	385	190

2018թ. պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 4 901 316,6 հազ. դրամ որից՝ 4 608 288,6 հազ. դրամ կրթության բնագավառի հաստատությունների պահպանման ծախսեր, կրթական օբյեկտների հիմնանորոգման ու կառուցման համար 273 028,0 հազ. դրամ:

Միջազգային կազմակերպություններ կողմից նախատեսվել է իրականացնել 20 000,0 հազ. դրամ ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ 2018թ. կրթության ոլորտի ֆինանսավորումը կկազմի 4 901 316,6 հազ. դրամ:

Կրթության ցուցանիշներ

Դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը պլանավորված 8,3 –ի դիմաց առաջին եռամսյակում, ինչպես և նախորդ տարում կազմել է 7.3: Դպրոցներում ուսուցիչների թվաքանակը սահմանվում է կիսամյակային կտրվածքով՝ տարեկան 2 անգամ՝ հունվար և սեպտեմբեր ամիսներին:

Բերված տվյալները ներառում են միայն «Մաթեմատիկա»,«Ֆիզիկա», «Կենսաբանություն»,«Քիմիա» առարկաների հանրապետական օլիմպիադաների վերջնական արդյունքները: Մնացած առարկաների հանրապետական և միջազգային օլիմպիադաների ցուցանիշները կազմել են 10 մրցանակակիրներ:

Ուսումը միջազգային կամ ՀՀ պետական բուհերում շարունակողների պլանավորված 190 մարդ ցուցանիշների վերաբերյալ տվյալները կներակայացվեն բուհերում ընդունելության քննաշրջանի ավարտից հետո՝ համապատասխան եռամսյակներում:

5.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները հիմնականում վերաբերում են գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանմանն ու զարգացմանը: Բնագավառում կա նաև մասնագետ կադրերի սակավության և կադրերի վերապատրաստման խնդիրը:

2018թ. ՏԳԾ-ով առաջարկվում է լուծել մշակույթի տների ջեռուցման խնդիրը, բարելավել գրադարանային պայմանները, ապահովել թանգարանների հավաքածուների անվտանգությունը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում ստեղծել կայուն ջերմախոնավային պայմաններ:

Մարզում մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են՝

1) Մարզի մշակութային կյանքի զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ
2) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերարտակավորում
3) Նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում
4) Մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների հիմնանորոգում
5) Պատմական հուշարձանների պահպանություն, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում
6) Սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում, երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

Մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման երաշխիքը պետական քաղաքականության իրականացումն է: Այն իր մեջ ներառում է տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը:

ՀՀ Արագածոտնի մարզը հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող տարածաշրջաններից է:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնախնդիրները հետևյալն են՝

1) առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման նպատակով համայնքներում մարզահրապարակների և խաղահրապարակների խիստ սակավությունը

2) նախակրթարանների և ուսումնական հաստատությունների գերակշիռ մասում անհրաժեշտ պայմանների և մարզագույքի պակասը

3) շրջակա միջավայրի կանաչապատման, խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների, հետիոտնի համար նախատեսված ճանապարհների ոչ բարվոք վիճակը

4) Մարզի բնակչության թվի համեմատ ոտքով և հեծանվով երթևեկողների ցածր տոկոսը

5) Ուսումնական հավաքներ կազմակերպելու, մրցումներին մասնակցելու, մարզագույք, անհրաժեշտ բուժսարքավորումներ և դեղորայք ձեռք բերելու համար մարզական կազմակերպություններում ֆինանսական միջոցների անբավարարությունը

6) Հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ մարզադահլիճների, մարզագույքի և այլ անհրաժեշտ պայմանների բացակայությամբ պայմանավորված պետական ուսումնական ծրագրի պահանջների ոչ լիարժեք իրականացումը

7) Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների սակավությունը:

Երիտասարդության ոլորտում առկա խնդիրները տարաբնույթ են և բխում են հիմնականում սոցիալական անապահով պայմաններից՝ ներառելով հասարակության սոցիալական տարբեր խավերին բնորոշ հիմնական խնդիրները, դրանք են.

1) երիտասարդության բնակարաններով ապահովվածությունը
2) առաջնային առողջության պահպանումը
3) երիտասարդության սոցիալական երաշխիքները
4) երիտասարդության զբաղվածությունը
5) հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանն առնչվող հարցեր
6) երիտասարդական միջոցառումների իրականացմանն ուղղված պետական միջոցների սղություն:

Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների և այլ մարմինների կողմից:

2018 թվականին ընթացքում նախատեսվող ծրագրեր.

2018թ. մարզային մշակութային միջոցառումների կազմակերպման համար պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 21 996,0 հազ. դրամ որից՝ մշակութային միջոցառումների իրականացում 3 062,7 հազ. դրամ այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված միջոցառում 890,0 հազ. դրամ, Հայոց բանակի տարեդարձին նվիրված միջոցառում 350,0 հազ. դրամ, «Մայրենիի օր» միջոցառում 177,0 հազ. դրամ, բարբառների մրցույթ-փառատոն 320,0 հազ. դրամ, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակին և Շուշիի ազատագրմանը նվիրված միջոցառում 255,0 հազ. դրամ, «Բերքի տոն» միջոցառում 365,5 հազ. դրամ, գեղարվեստի, արվեստի և հանրակրթական դպրոցների սովորողների ձեռքի աշխատանքների ստուգատես-մրցույթ 285,0 հազ. դրամ, ժողովրդական երգ ու պարի մրցույթ-փառատոն 421,2 հազ. դրամ, մշակույթի և սպորտի բնագավառի հաստատությունների պահպանման ծախսերը կազմել է՝ 18 903,3 հազ. դրամ: Մարզի մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու կառուցման համար նախատեսվել է իրականացնել 128 562,0 հազ. դրամի ներդրումներ:

Միջազգային կազմակերպություններ կողմից նախատեսվել է իրականացնել 70 000,0 հազ. դրամի ներդրումներ մարզի մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու կառուցման համար, 15 000,0 հազ. դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Համայնքային բյուջեից նախատեսվել է հատկացնել 15 000,0 հազ. դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ 2018թ. մշակույթի և սպորտի ոլորտի ֆինանսավորումը կկազմի 250 528,0 հազ. դրամ որից՝ 51 966,0 հազ. դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու կառուցման համար 198 562,0 հազ. դրամ:

5.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարզի առողջապահական համակարգում գործում են **21** բուժհաստատություններ՝ որոնցից 5 մարզպետարանի ենթակայության՝ **(1 ՊՈԱԿ, 4 ՓԲԸ)**, և համայնքային ենթակայության **1** առողջության կենտրոն, **15** ամբուլատորիաներ (ՀՈԱԿ):

Մարզում գործում են նաև երեք մասնավոր բժշկական կազմակերպություններ՝ **1** առողջության կենտրոն՝ Նարեկ ԱԿ, **1** ստոմատոլոգիական պոլիկլինիկա՝ ԼԻԼԻԴԵՆՏԻՍ ՍՊԸ և 1 Աննա և Արմենակ Թադէոսյանների բուժարան:

Մարզում առողջապահության բնագավառում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

1) Մարզի բուժհաստատությունների լիարժեք հագեցվածություն ժամանակակից գույքով, բժշկական սարքավորումներով և պարագաներով
2) Շենքային պայմանների բարելավում, վերանորոգում և տեխնիկական հագեցվածություն
3) Բուժհիմնարկների միջև տեղեկատվական, համակարգչային ցանցի լիարժեք կիրառում
4) Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
5) Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
6) Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում
7) Վաղ հասակի երեխաների հիվանդացության իջեցում
8) Տեղային և մարզային մակարդակներում կառավարման մոնիտորինգի և վերահսկողության բարելավում:
9) Մարզի շտապ օգնության ծառայության ժամանակակից մեքենաներով հագեցվածության անհրաժեշտություն:

Մարզի հեռավոր տարածաշրջաններում, որտեղ 5-6 ամիս ձմեռային պայմաններ են, ճանապարհները դառնում են դժվարանցանելի: Առողջապահական հաստատությունների առաջնային բուժօգնության կազմակերպումը հնարավոր է միայն շտապօգնության ամենագնաց մեքենաներով համալրման միջոցով:

Պետական պատվերի նկատմամբ վճարովի ծառայությունների կտրուկ աճ ապահովելու նպատակով 2018 թվականին նախատեսվում են իրականացնել հետևյալ ծրագրային միջոցառումները.

1. Մարզի առողջապահական հաստատությունների համալրում համապատասխան որակավորում ստացած մասնագետներով:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ, ելնելով մարզի առողջապահական համակարգի կադրային պահանջարկից, իրականացվում է բժիշկ-մասնագետների ուսուցում կլինիկական օրդինատուրայում պետական պատվերի շրջանակներում, ինչպես նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման նպատակով իրականացվել են և նախատեսվում են այսուհետ ևս կազմակերպել վերապատրաստման արտագնա դասընթացներ մարզում:

2. Բժշկական սարքվորումների ձեռք բերում և նոր բժշկական ծառայությունների ներդնում: Մարզում նոր բժշկական ծառայությունների ներդնումը կնպաստի առողջապահական համակարգի զարգացմանը, մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարելավմանը և մատչելիության ապահովմանը, որը կբերի դեպի Երևանի բժշկական հաստատություններ մարզի ազգաբնակչության արտահոսքի կրճատմանը, տեղի բժշկական հաստատությունների վճարովի ծառայությունների աճին:

Այս գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է բուժհաստատությունները վերազինել նոր և ժամանակակից բժշկական սարքավորումներով՝ ակնկալելով նաև պետական աջակցություն, մասնավորապես առողջապահական հաստատությունների համար սահմանել վարկավորման արտոնյալ պայմաններ՝ նվազագույն տոկոսադրույքների տեսքով:

3.Բուժհաստատությունների կոնցենսիոն կառավարում:

Բուժհաստատությունների արդյունավետ կառավարման նպատակով ապահովել պետականի և մասնավորի համագործակցությունը՝ կոնցեսիոն կառավարման ձևաչափով: Ներգրավելով մասնավոր ներդրողներ, ապահովել հավասար պայմաններ մասնակիցների համար՝

առաջադրելով հստակ պահանջներ՝ կոնցեսիոն կառավարման հանձնումը առավել նպաստավոր և արդյունավետ դարձնելու նպատակով: Բուժհաստատությունների կոնցեսիոն կառավարման հանձնումը կնպաստի ֆինանսական միջոցների ներգրավմանը, ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչն իր հերթին կապահովի վերջիններիս ֆինանսական ցուցանիշների բարելավմանը, կնպաստի բնակչությանը որակյալ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուն և բժշկական հաստատությունների եկամուտների ավելացմանը:

4.Վճարովի ծառայությունների ավելացման համար անհրաժեշտ է վճարովի ծառայություններից աշխատավարձի բոնուսային համակարգի ներդրումը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա և կնվազեցնի նաև կոռուպցիոն ռիսկերը:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկների 2017 թվականի գլոբալ բյուջեն կազմել է **1 537 296.4** հազ. դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով՝ **1 024 933.2** հազ. դրամ, հիվանդանոցային ծառայության գծով՝ **512 363.2** հազ. դրամ: Այն 2016 թվականի համեմատ նվազել է **2.4%**-ով:

2017 թվականի դրությամբ մարզի բուժհիմնարկների կատարողականը կազմում է մոտ **1 509 957.5** հազ. դրամ: Գլոբալ բյուջեի հաշվարկով 12 ամիսների դրությամբ **98.2%**-ով ստացվել է կատարողականի գումարը:

ՀՀ Արագածոտնի մարզի բժշկական հաստատություններում 2017 թվականին արձանագրվել է վճարովի ծառայությունների շուրջ **20%**-ով աճ 2016թ. համեմատ: 2017 թվականի դրությամբ վճարովի ծառայությունները կազմել են **121.9** մլն. դրամ՝ տարեկան բյուջեի **7.3%**-ը:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկների 2018 թվականի գլոբալ բյուջեն կազմում է **1 453 662,5** հազ. դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով՝ **998 574.9** հազ.դրամ, հիվանդանոցային ծառայության գծով՝ **455 087.6** հազ. դրամ: Այն 2017 թվականի համեմատ նվազել է **5.6%**-ով:

Հաշվի առնելով 2017 թվականի ընթացքում մարզի բուժհիմնարկներում կատարված օպտիմալացման աշխատանքները՝ նախատեսվում է 2018 թվականին վճարովի ծառայությունների մուտքերի կտրուկ աճ մինչև **170.7** մլն. դրամով, 2017թ. համեմատ շուրջ **40%**-ով /կամ գլոբալ տարեկան բյուջեի **11%/:**

Օպտիմալացման արդյունքում Աշտարակի և Ծաղկահովիտի ԲԿ-ում պլանավորվել է խնայել **63.4** մլն. դրամ, որը կուղղվի նախորդ տարիներին կուտակած կրեդիտորական պարտքերի մարմանը, կապիտալ ծախսերին և բուժսարքավորումների ձեռքբերմանը:

2018թ. պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 1 453 662,5 հազ.դրամ հիվանդանոցային և ամբուլատոր պոլիկլինիկական բուժօգնության կազմակերպման համար:

Միջազգային կազմակերպություններ կողմից նախատեսվել է իրականացնել 25 000,0 հազ. դրամ ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Համայնքային բյուջեից նախատեսվել է հատկացնել 5 000,0 հազ.դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ 2018թ. առողջապահության ոլորտի ֆինանսավորումը կկազմի 1 483 662,5 հազ.դրամ:

Առողջապահական ոլորտի ցուցանիշներ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության առողջապահական հաստատություններում 2018 թվականին պլանավորված 170,7 մլն դրամից, առաջին կիսամյակում վճարովի ծառայությունների դիմաց մուտքագրվել է 74,5 մլն դրամ, որը կազմում է տարեկան պլանի 43.6 տոկոսը:

5.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, որի համար հարկավոր են՝

1) սոցիալական խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնում,
2) սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում,
3) սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցություն,
4) սոցիալական ծառայությունների գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավում,
5) սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում

2018թ. առաջարկվում է նաև իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,
2) ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տնային պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը, փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,
3) գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց առնվազն ժամանակավոր զբաղվածության ապահովումը՝ վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի ընդլայնումը, սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի լուծման հիմնական ուղղվածություններն են՝

1) ընտանիքի, կանանց և երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի զարգացում
2) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցում և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելում
3) ներառական կրթության կազմակերպում
4) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հիմնախնդիրներ
5) պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրներ
6) մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող երեխաների հիմնախնդիրներ
7) ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության հիմնախնդիրներ:
8) Միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ, անապահով, սոցիալական և բարոյահոգեբանական դժվարություններ կրող ընտանիքների երեխաների նկատմամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները՝
    1. երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացնող բոլոր պետական և ոչ պետական կառույցների սերտ համագործակցության ապահովում,
    2. մանկապարտեզների շենքերի վերանորոգում,
    3. երեխաների ազատ ժամանցի կազմակերպման նպատակով խաղահրապարակների ստեղծում,
    4. ներառական կրթության կազմակերպում և թեքահարթակների առկայության ապահովում:

2018թ. պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 2152 322,0 հազ.դրամ սոցիալական պաշտպանության ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Միջազգային կազմակերպություններ կողմից նախատեսվել է իրականացնել 130 885,0 հազ. դրամ ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Համայնքային բյուջեից նախատեսվել է հատկացնել 10 000,0 հազ.դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ 2018թ. սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը կկազմի 2 293 207,0 հազ.դրամ:

VI. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
6.1. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզում ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերականգմանն ու պահպանմանը:

Ոլորտում դեռևս շարունակում է առաջնային լինել մարզային և միջհամայնքային որոշ ճանապարհների հիմնանորոգման հարցը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Անհրաժեշտ է նշել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը, որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում, որն էական ազդեցություն կունենա բեռնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ ինքնարժեքի նվազեցման վրա:

Մարզի 114 համայնքներից 73-ում գործում են միջմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ, 2 համայնքում գործում է ներմարզային մեկ երթուղի, իսկ 39 համայնքում ուղևորափոխադրումներ չի իրականցվում ճանապարհների վատ վիճակի և ուղևորահոսքի պակասի պատճառով:

Ոլորտի թույլ կողմերն են՝ տրանսպորտային միջոցների մաշվածությունը, ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճանը, հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված ծառայությունների բացակայությունը:

Ավտոմոբիլային ճանապարհներ՝ տեղական, մարզային և միջպետական նշանակության:

1) Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 157.1 կմ,
2) Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 148.0 կմ,
3) Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ 389.4 կմ:

Մարզում առկա են միջպետական՝ 48, հանրապետական՝ 13 և 38 համայնքային նշանակության կամուրջներ: ՀՀ Արագածոտնի մարզի միջպետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք վիճակում են:

2018թ. ևս ծրագրվում է ավելացնել և թարմացնել երթուղիները սպասարկող շարժակազմը, իսկ ճանապարհաշինության բնագավառում՝ ավարտել նախատեսված ճանապարհային ցանցի նորոգումը:

Մարզի համայնքների տրանսպորտային սպասարկման խնդիրների կարգավորման ուղղությունները

1. Որոշ երթուղիների համար (հատկապես մարզի սահմանամերձ և փոքրաթիվ բնակչություն ունեցող գյուղերը սպասարկող) մեղմացնել ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների հարկային բեռը,

2. Համայնքային բյուջեներից աջակցություն ցուցաբերել փոքրաթիվ բնակչություն ունեցող բնակավայրերը սպասարկող կազմակերպություններին:

3. Համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեվորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման» կարգում, և

ա) մարզի խոշորացված համայնքերում թույլատրել իրականացնել ներհամայնքային (բնակավայրերը համայնքային կենտրոնին կապող) երթուղային ցանցի ձևավորում և ուղեվորների կանոնավոր փոխադրումների կազմակերպում:

բ) հանել մեկ տրանսպորտային միջոցով սպասարկվող ներմարզային երթուղիների սպասարկման համար պահուստային ավտոբուսների պարտադիր պահանջը:

գ) նախատեսել մի քանի երթուղիների խմբավորմամբ՝ մեկ փաթեթով, մրցութային եղանակով մեկ փոխադրողի ընտրություն (երթուղիների սպասարկման մրցույթներն իրականացնել մեկ փաթեթով՝ կատարելով շահութաբեր և ոչ շահութաբեր երթուղիների խմբավորում), ինչը կապահովի մարզի բոլոր համայնքների տրանսպորտային սպասարկումը:

2018 թվականին կատարվելիք միջոցառումները

- Մարզի երթուղային ցանցում ավելացնել նոր երթուղիներ (մարզի որոշ խոշորացված համայնքների բնակավայրերը կապել խոշորացված համայնքների կենտրոնների հետ): Արդյունքում մարզի նոր երթուղային ցանցը կապահովի մարզի չսպասարկվող համայնքների տրանսպորտային սպասարկումը:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող ներմարզային բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվի մեջ հասցնել մինչև 30%-ի, իսկ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով համայնքի բնակավայրերից համայնքի կենտրոն անցնելու միջին արագությունը հասցնել 60կմ/ժ:

2018 թվականին մարզում ճանապարհաշինության ոլորտում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի 11.3 մլրդ. դրամ գումար, որը կուղղվի հանրապետական, մարզային, համայնքային ճանապարհների հիմնանորոգման, պահպանման և կահավորման աշխատանքների իրականացմանը:

Տրանսպորտի ոլորտի ցուցանիշներ

Մարզի 114 համայնքներից 73-ում գործում են միջմարզային կանոնավոր 27 ուղևորափոխադրումներ, 3 համայնքում գործում է ներմարզային մեկ երթուղի, իսկ 39 համայնքում ուղևորափոխադրումներ չեն իրականցվում ճանապարհների վատ վիճակի և ուղևորահոսքի պակասի պատճառով:

2018թ. ևս ծրագրվում է ավելացնել և թարմացնել երթուղիները սպասարկող շարժակազմը: Մարզի խոշորացված համայնքերում թույլատրվել է իրականացնել ներհամայնքային (բնակավայրերը համայնքային կենտրոնին կապող) երթուղային ցանցի ձևավորում և ուղևորների կանոնավոր փոխադրումների կազմակերպում: Նման օրինակ է հանդիսանում Ապարան համայնքը, որի խոշորացումից հետո ստեղծվել է ներհամայնքային 5 երթուղի, որոնք սպասարկում են 16 բնակավայրերի:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրասպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը 2018թ. կազմել է 37, 2018թ.-ի՝ առաջին կիսամյակին կազմել է 35:

Համայնքների հետ քննարկման փուլում է գտնվում համայնքային ճանապարհների ոչ ավանդական հիմնանորոգման աշխատանքների կազմակերպման ընթացքը:

6.2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչության կայուն, հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանք է:

Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, ոլորտում իրականացված ծրագրերը անշուշտ մեղմել են իրավիճակը, սակայն մարզի մի շարք համայնքներում դեռևս շարունակում են մնալ հետևյալ հիմնախնդիրները.

1) ջրամատակարարման համակարգերի մաշվածություն և քայքայվածություն, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն, որը բերում է արտահոսքի ու կորուստների (հատկապես ներհամայնքային ցանցերում)
2) գանձումների ցածր մակարդակ
3) ջրի որակի խնդիրներ
4) ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի անբավարար վիճակը կամ դրանց բացակայությունը:

Ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների հիմնական նպատակն է նվազեցնել շրջակա միջավայրի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև բարձրացնել առողջապահական ցուցանիշները՝ կեղտաջրերի մաքրման համակարգի բարելավման միջոցով՝ կիրառելով ակրացման և մաքրման մեխանիկական եղանակներ մարզի բոլոր համայնքներում:

2018 թվականին մարզում ջրամատակարարում և ջրահեռացում ոլորտում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի 163.3 մլն ՀՀ դրամ, մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն կունենա:

6.3. ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Գազաֆիկացման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով ջերմամատակարարման լոկալ համակարգերի ներդրման վրա:

Գազաֆիկացման մակարդակը մարզում բավականին ցածր է, 114 համայնքներից 63-ը (54.3%) գազիֆիկացված են, որտեղ բնակվում են մարզի բնակիչների շուրջ 64%:

2018 թվականի ընթացքում գազամատակարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունն ուղղված կլինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը:

Գազաֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է, ինչպես նաև մարզի համար ռազմավարական նշանակության խնդիրների լուծման հնարավորություն:

2018թ. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի միջոցներով մարզում կիրականացվեն գազամատակարաման բարելավման աշխատանքներ՝ 60 000,0 հազ.դրամ գումարով:

Ինչպես նաև համայնքային բյուջեներից նախատեսվում է 10 000,0 հազ.դրամ ներդնել համայնքների առանձին թաղամասերի գազաֆիկացման համար:

Ընդհանուր առմամբ 2018թ. գազաֆիկացման ոլորտի ֆինանսավորումը կկազմի 70 000,0 հազ.դրամ:

6.4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Մարզի էլեկտրամատակարարման բնագավառում ևս կարևորվում է մատակարարվող էներգիայի որակի բարելավումը, կայուն էլեկտրամատակարարումը, կորուստների կրճատումը: Այդ իսկ պատճառով ժամանակի հրատապ պահանջ են դարձել արտադրող հզորությունների, էլեկտրական էներգիա տեղափոխող, բաշխող ցանցերի սերնդափոխության և արդիականացման հետ կապված հարցերը: Անհրաժեշտ է լուծել ՀՀ Կառավարության 03.06.2004թ. թիվ 1102-Ն որոշման պահանջներին համապատասխան Էներգետիկ անվտանգության գոտիներում գտնվող օբյեկտների տեղափոխման հարցը:

2018թ. ընթացքում մարզում կշարունակվեն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ՀՀ տարածքում իրականացվող ծրագրերի շրջանակներում մարզում ևս նախատեսվում է իրականացնել «Էներգախնայողություն հանրային օբյեկտներում ծրագիրը» և «Համայնքային էներգախնայողության վարկային ծրագիրը», որոնք ֆինանսավորվում են հիմնադրամի շրջանառու ֆոնդից:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման ծրագիր, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորումը կկազմի 1 316 964,7 հազ.դրամ:

Համայնքային բյուջեից նախատեսվել է հատկացնել 15 000,0 հազ.դրամ իրականացվող ոլորտային ծրագրերի կազմակերպման համար:

2018թ. «ՀԷՑ» ՓԲԸ-ի միջոցներով մարզում կիրականացվեն էլեկտրամատակարարման բարելավման աշխատանքներ՝ 50 000,0 հազ.դրամ գումարով:

Ընդհանուր առմամբ 2018թ. էներգետիկայի ոլորտի ֆինանսավորումը կկազմի 1 381 964,7 հազ.դրամ:

VII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգումը, համայնքների գլխավոր հատակագծերի, շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են:

Ամփոփված են ուսումնական հաստատությունների կառուցման և նորոգման, բնակարանաշինության, խմելու ջրամատակարարման, ճանապարհաշինության և գազամատակարարման ոլորտում նախատեսվող ներդրումները:

2018թ. մարզի կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների հիմնանորոգումների համար նախատեսվում է իրականացնել 772 498,0 հազ.դրամի ծրագրեր:

Ընդհանուր առմամբ 2018թ. քաղաքաշինության ոլորտի բյուջեն կազմում է 892 498,0 հազ.դրամ:

VIII. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տարածքային կառավարման բնագավառի զարգացման 2018 թվականի հիմնական ուղղությունները.

Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջին շրջանում ընթացող բարեփոխումները տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման, մարզային իշխանությունների գործունեության իրական հաշվետվողականության, թափանցիկության ու հրապարակայնության ապահովման, ինչպես նաև զարգացման պլանավորման բնագավառում հանրային, մասնավոր ու հասարակական սեկտորների գործակցության ուղղությամբ կուտակվել է զգալի փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար:

2018թ. ևս տարածքային կառավարման բնագավառում գործունեության կարևորագույն ուղղություններն են.

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ-պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:
2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կարևորվում է ՀՀ կառավարության կողմից պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերի ու չափորոշիչների մշակումը և սահմանումը, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացմանը:
3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:
4) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականությունները ու իրավասությունները՝ հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում մշակված ու գործադրված ինստիտուցիոնալ համակարգը
5) Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ -ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը:
6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները,

ստեղծել միասնական տվյալների բազա, որն ի վերջո կծառայի որպես մարզային կյանքի բոլոր բնագավառների համար բոլորի կողմից ընդունված պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

7) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը:

8) Մարզպետարանի աշխատակազմին ամրացված պետական սեփականություն հանդիսացող գույքի համապարփակ հաշվառման և օգտագործման, մարզի վարչական տարածքում գտնվող և համայնքային սեփականություն չհանդիսացող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների, մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպություններում պետության կողմից լիազոր ներկայացուցչի լիազորությունների արդյունավերտ իրականացում:

9) ***Մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը:***

Պետական, համայնքային և մասնավոր գույքի արդյունավետ կառավարում

Մարզի տնտեսական զարգացման ապահովման գործում կարևորագույն նշանակություն ունի չօգտագործվող պետական, համայքային, ինչպես նաև մասնավոր գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը: Պետական, համայնքային և մասնավոր գույքի կառավարման ոլորտում իրականացվում է միասնական և շարունակական քաղաքականություն:

Չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական, համայնքային և մասնավոր գույքերի արդյունավետ կառավարման համար 2018 թվականին նախատեսում ենք .

- ելնելով գույքի գործառնական նշանակությունից՝ այն ներգրավել մարզի տնտեսության տարբեր բնագավառներում,
- կազմակերպել հանդիպումներ ներդրողների հետ և առաջարկել գույքացանկի գույքը՝ անհատույց օգտագործման, վարձակալության, հավատարմագրային կառավարման կամ սեփականության իրավունքով տրամադրման եղանակներով,
- սահմանել հստակ չափորոշիչներ ներդրումների չափի, նոր ստեղծվող աշխատատեղերի և այլնի վերաբերյալ:

2018թ. ևս կշարունակվի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը:

8.2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տեղական ինքնակառավարման ոլորտը բարելավելու համար անհրաժեշտ է զարգացնել համայնքային ծառայության համակարգը, խորացնել առկա համագործակցության մակարդակը համայնքների միջև, բարցրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, հասարակության իրազեկության աստիճանը, ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

2018թ. տեղական ինքնակառավարման բնագավառի գերակայություններն են՝

1) Ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը
2) Ավարտել համայնքների սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքները
3) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

4) Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը,
5) Նոր ձևավորվող համայնքների աշխատակազմերի կարողությունների հզորացումը,
6) Նոր ձևավորվող համայնքների զարգացման ծրագրերի մշակումը
7) Մարզի 5000 ավել բնակչություն ունեցող համայնքների տնտեսական զարգացման ծրագրերի մշակումը:

ՀՀ Արագածոտնի մարզը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած և Թալին տարածաշրջանները: Համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում մարզի համայնքների թիվը դարձել է **72**, նախկին **114**-ի փոխարեն:

2018թ. կշարունակվի համայնքների տեղեկատվական բազաների շահագործման ծրագիրը, ինչպես նաև գյուղատնտեսության, տեղական ինքնակառավարման և քաղաքաշինության համապարփակ տվյալների հաշվառման, թերությունների վերացման և համայնքներում հաշվառման նոր համակարգերի ներդրման աշխատանքները:

2018թ. համար պլանավորվում է մեկ շնչին ընկնող համայնքների սեփական եկամուտների աճ 3-5%-ով՝ 2017 թվականի համեմատ և ընդհանուր եկամուտների աճ՝ 5%-ով:

Համայնքների սեփական եկամուտները (գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ, աղբահանության վճար) մեկ շնչի հաշվով 2018թ. պլանավորվել է 11,1 հազ դրամ: Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ՝ 36,4 %:

Ընդհանուր առմամբ 2018թ. մարզի համայնքային ֆոնդային բյուջեներով նախատեսված ծախսեր 626 078,2 հազ.դրամ:

8.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1) մարզի տարածքում գործող ՀԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ անհրաժեշտ համագործակցության կազմակերպում՝ հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նկատառումներով,
2) մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ համայնքներ կատարվող այցելությունների լուսաբանման աշխատանքների շարունակական կազմակերպում,
3) մարզի համայնքների ղեկավարների, ավագանու անդամների կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունների, ինչպես նաև մարզի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրագործման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում,
4) համայնքային հիմնահարցերի լուսաբանում, ազգաբնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,
5) հասարակական ինչեղություն ունեցող հարցերի շրջանակներում հանրային քննարկումների կազմակերպում:

2018 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) շարունակել համայնքներում առկա պաշտոնական ինտերնետային կայքերի հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները,

2) պարբերաբար կազմակերպել հանրային քննարկումներ՝ համայնքային կարևորություն ներկայացնող հարցերի առնչությամբ,
3) հասարակական կազմակերպությունների և համայնքների ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին մասնակից դարձնել համայնքի ավագանու նիստերին:

Ընդհանուր առմամբ 2018թ. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառավարման ապարատի պահպանման ծախսեր 462 439,4 հազ.դրամ:

8.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին իրականացվել են միջոցառումներ ուղղված արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանությանը: Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրները կգտնվեն մարզպետարանի ուշադրության կենտրոնում: Միջոցներ կձեռնարկվեն մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար պահանջվող միջոցառումների պատշաճ իրականացման համար:

Արագածոտնի մարզպետարանի կողմից կազմակերպական առումով օժանդակություն ցույց կտրվի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների ուսուցման պլանի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ինստիտուտում վերապատրաստվող աշխատակիցներին:

Ոլորտում առաջնահերթ հիմնախնդիր է շարունակում մնալ քարաթափերի կանխարգելման հարցը: Հիմնախնդրի լուծման հարցում ՀՀ Արագածոտնի մարզպետարանը կիրականացնի հետևյալ գործառույթները.

1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ բնագավառի համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին տեղեկատվության ներկայացում՝ քարաթափերի, դրանց հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին
2) անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների կազմակերպում
3) գույքագրման, միջոցառումների ծրագրերի մշակման և համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին ներկայացման աշխատանքների կազմակերպում
4) ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող աշխատանքների իրականացման կազմակերպում:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, մարզին սպառնացող համաճարակը, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

2018 թվականին մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար կշարունակվեն իրականացվել հետևյալ միջոցառումները՝

1. Մարզին սպառնացող տարաբնույթ ռիսկերի գնահատում և հնարավորինս վերահսկում, համապատասխան տվյալների բազաների ստեղծում: 9 համայնքում կատարվել են ռիսկերի գնահատում, ստեղծվել են համապատասխան տվյալների բազաներ:
2. Մարզում, համայնքներում, ինչպես նաև վտանգ ներկայացնող օբյեկտներում պահեստային կառավարման կետերի ստեղծում: Առկա են 5 պահեստային կառավարման կետեր, որոնք հիմնականում վերանորոգման կարիք ունեն:
3. Մարզի համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման նպատակով համայնքներից կհավաքագրվեն հատուկ, կարևոր և ընդհանուր

նշանակության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը: 10 համայնքից հավաքագրվել են հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն:

IX. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2018 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի բոլոր ոլորտների պահանջվող ֆինանսավորումը կազմում է՝

Նախատեսված ծրագրերն ու միջոցառումները	*2018թ. նախատեսված ֆինանսավորման գումարը*	*Փաստացի ֆինանսավորման չափը հաշվետու ժամանակահատվածում (1-ի կիսամյակ)*
ԸՆԴԱՄԵՆԸ 2018թ.	*40 058 738,7*	*22 608 098,1*
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	*23 136 775,5*	*10 910 096,5*
սեփական միջոցներ	*9 955 142,8*	*4 612 584,2*
վարկային միջոցներ	*13 181 632,7*	*6 297 512,3*
Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	*480 885,0*	*356 265,3*
Համայնքային բյուջե	*766 078,2*	*190 824,0*
Մասնավոր ներդրողներ	*15 660 000,0*	*10 076 912,3*
Այլ աղբյուրներ	*15 000,0*	*1 074 000,0*

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Մոնիտորինգի հիմնական ցուցանիշներ

#	Անվանումը	Չափման միավորը	ՀՀ Արագածոտնի մարզ		
			2017թ. փաստացի	2018թ. պլանավորված	Հաշվետու ժամանակահատված (1-ի կիսամյակ, 9 ամիս, տարի)
Մարզի տնտեսական ցուցանիշներ					
1	Մարզի վարչական տարածքում կատարված ներդրումների ծավալը	մլն. դրամ	26 273,0	30 467,7	18 328,2
		մեկ շնչի հաշվով, հազ դրամ	204,5	237,1	142,6
	այդ թվում՝ մասնավոր հատվածում կատարվող ներդրումներ	մլն. դրամ	6 526,0	15 550,0	9 990,0
2	Տարվա ընթացքում ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվը (առանց սեզոնային աշխատատեղերի)	մարդ	350	530	347
	1000 բնակչին ընկնող աշխատատեղերի թիվը		2,7	4,1	2,7
Համայնքների ֆինանսական ցուցանիշներ					
1	Համայնքների սեփական եկամուտները (գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ, աղբահանության վճար) մեկ շնչի հաշվով	հազ. դրամ	8,6	11,1	3,7
2	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ	%	33,4	36,4	27,7
Համայնքային ծառայություններ-աղբահանություն					
1	Փակված (կամ փակվելու ենթակա) աղբավայրերի թիվը	հատ	125	1	1
2	Շահագործվող աղբավայրերի թիվը	հատ	12	11	11
3	Աղբահանություն իրականացնող բնակավայրերի քանակ	հատ	27	117	83
4	Ֆիզիկական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն դրամ	32,1	105,1	19,7
5	Իրավաբանական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն դրամ	14,5	24,9	8,3
Գյուղատնտեսություն					
1	Գյուղատնտեսության մեջ նոր կամ շարունակական ներդրումներ	մլն. դրամ	4 500,0	5 325,4	2 667,3
2	Գյուղատնտեսական նոր աշխատատեղեր	մարդ	80	70	55

#	Անվանումը	Չափման միավորը	ՀՀ Արագածոտնի մարզ		
			2017թ. փաստացի	2018թ. պլանավորված	Հաշվետու ժամանակահատված (1-ի կիսամյակ, 9 ամիս, տարի)
3	Ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների տարածքը	հա	44,2	120	38
4	Հակակարկտային ցանցերով ցանցապատված այգիների տարածքը	հա	20,0	22,0	10
5	Մարզում սպանդանոցային կառույցների թիվը	հատ	1	1	1
6	Սպանդանոցների հզորությունը	տոննա/տարի	10500	7500	7500
7	Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկայի թիվը	հատ	14	15	15
8	Տոհմային անասնաբուծական տնտեսությունների քանակ	հատ	2	1	1
9	Տոհմային տնտեսություններում անասնագլխաքանակը	հատ	400	200	60
10	Սառնարանային տնտեսությունների քանակ	հատ	18	1	1
11	Սառնարանային տնտեսությունների հզորություն	տոննա	9000	1000	1000
12	Գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերես	հա	14000	14450	14400
13	Փոքր տնտեսությունների թիվը (1-5 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 5-10 հա վարելահող, կամ 0.1-0.5 հա ջերմոց, կամ 20-30 գլուխ խ. եղջ. գյուղ. կենդանի, կամ 50-100 գլուխ մանր եղ. գյուղ. կենդանի)	հատ	2123	2085	2110
14	Միջին տնտեսությունների թիվը (5-10 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 10-20 հա վարելահող, կամ 0.5-2.0 հա ջերմոց, կամ 30-60 գլուխ խ. եղջ. գյուղ. կենդանի, կամ 100-150 գլուխ մանր եղ. գյուղ. կենդանի)	հատ	291	300	296
15	Խոշոր տնտեսությունների թիվը (10-ից ավելի հա պտղատու այգի կամ խաղող, կամ 20-ից ավելի հա վարելահող, կամ 2-ից ավելի հա ջերմոց, կամ 60-ից ավելի գլուխ խ. եղջ. գյուղ. կենդանի, 150-ից ավելի գլուխ մանր եղ. գյուղ. կենդանի)	հատ	120	123	121

#	Անվանումը	Չափման միավորը	ՀՀ Արագածոտնի մարզ		
			2017թ. փաստացի	2018թ. պլանավորված	Հաշվետու ժամանակահատված (1-ի կիսամյակ, 9 ամիս, տարի)
Կրթություն					
1	Դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը		7,3	8,3	7,3
2	Միջազգային/հանրապետական օլիմպիադաների մրցանակակիրներ	մարդ	13	15	10
3	Ուսումը միջազգային կամ ՀՀ պետական ԲՈՒՀ-երում շարունակողներ	մարդ	385	190	0
Տրանսպորտ					
1	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը	թիվ	39	37	35
2	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով համայնքի բնակավայրերից համայնքի կենտրոն անցնելու միջին արագությունը	(կմ/ժամ)	71,3	70	70
3	Մարզի բնակավայրերի թիվը՝ որոնք ասֆալտապատ ճանապարհով կապված չեն հիմնական մայրուղուն (չունեն բարվոք ճանապարհ դեպի շուկաներ)	հատ	13	10	10
Առողջապահական ոլորտի ցուցանիշներ					
1	Վճարովի առողջապահական ծառայությունների գումար	մլն. դրամ	121,9	170,7	74,5